- UNESCO, 1954 Convention Second Protocol Committee Emphasizes Protecting Heritage for Peace, unter: <https://www.unesco.org/en/articles/1954-convention-second-protocol-committee-emphasizes-protecting-heritage-peace> (letzter Zugriff: 15.12.2022).
- UNESCO, ЗАКОН РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ. О ВЫВОЗЕ КУЛЬТУРНЫХ ЦЕННОСТЕЙ, 2004, unter: [https://ru.unesco.org/sites/default/files/armenia-law1042-2004\\_rusorof.pdf](https://ru.unesco.org/sites/default/files/armenia-law1042-2004_rusorof.pdf) (letzter Zugriff: 2022).
- Wikipedia, Bergkarabachkonflikt. International, 2022, unter: <https://de.wikipedia.org/wiki/Bergkarabachkonflikt#International> (letzter Zugriff: 15.11.2022).
- Wikipedia, Cultural heritage, 2022, unter: [https://en.wikipedia.org/wiki/Cultural\\_heritage](https://en.wikipedia.org/wiki/Cultural_heritage) (letzter Zugriff: 15.11.2022).
- Wikipedia, Europäisches Kulturabkommen, 2022, unter: [https://de.wikipedia.org/wiki/Europ%C3%A4isches\\_Kulturabkommen](https://de.wikipedia.org/wiki/Europ%C3%A4isches_Kulturabkommen) (letzter Zugriff: 15.11.2022).
- Wikipedia, Haager Konvention zum Schutz von Kulturgut bei bewaffneten Konflikten, 2022, unter: [https://de.wikipedia.org/wiki/Haager\\_Konvention\\_zum\\_Schutz\\_von\\_Kulturgut\\_bei\\_bewaffneten\\_Konflikten](https://de.wikipedia.org/wiki/Haager_Konvention_zum_Schutz_von_Kulturgut_bei_bewaffneten_Konflikten) (letzter Zugriff: 15.11.2022).
- Wikipedia, Intangible Cultural Heritage, 2022, unter: [https://en.wikipedia.org/wiki/Intangible\\_cultural\\_heritage](https://en.wikipedia.org/wiki/Intangible_cultural_heritage) (letzter Zugriff: 15.11.2022).
- Wikipedia, Internationaler Strafgerichtshof, 2022, unter: [https://de.wikipedia.org/wiki/Internationaler\\_Strafgerichtshof](https://de.wikipedia.org/wiki/Internationaler_Strafgerichtshof) (letzter Zugriff: 15.11.2022).
- Wikipedia, Internationales Übereinkommen zur Beseitigung jeder Form von Rassendiskriminierung, 2022, unter: [https://de.wikipedia.org/wiki/Internationales\\_%C3%9C%C3%BCbereinkommen\\_zur\\_Beseitigung\\_jeder\\_Form\\_von\\_Rassendiskriminierung](https://de.wikipedia.org/wiki/Internationales_%C3%9C%C3%BCbereinkommen_zur_Beseitigung_jeder_Form_von_Rassendiskriminierung) (letzter Zugriff: 15.11.2022).
- Wikipedia, Kulturgut, 2022, unter: <https://de.wikipedia.org/wiki/Kulturgut> (letzter Zugriff: 15.11.2022).
- Wikipedia, Kulturgutschutz, 2022, unter: <https://de.wikipedia.org/wiki/Kulturgutschutz> (letzter Zugriff: 15.11.2022).
- Wikipedia, Recht. Funktionen des Rechts, 2022, unter: [https://de.wikipedia.org/wiki/Recht#Funktionen\\_des\\_Rechts](https://de.wikipedia.org/wiki/Recht#Funktionen_des_Rechts) (letzter Zugriff: 15.11.2022).
- Wikipedia, UNESCO Intangible Cultural Heritage Lists, 2022, unter: <https://en.wikipedia.org/wiki/UNESCO>

- [Intangible\\_Cultural\\_Heritage\\_Lists](#) (letzter Zugriff: 15.11.2022).
- КОНТИНЕНТ, Закон Азербайджанской Республики от 21 декабря 2012 года № 506-IVQ О культуре, unter: [https://continent-online.com/Document/?doc\\_id=31498071#pos=18;-60](https://continent-online.com/Document/?doc_id=31498071#pos=18;-60) (letzter Zugriff: 15.11.2022).
- ЗАКОНОДАТЕЛЬСТВО СТРАН СНГ, ЗАКОН АЗЕРБАЙДЖАНСКОЙ РЕСПУБЛИКИ. О культуре. Неофициальный перевод, unter: [https://base.spininform.ru/show\\_doc.fwx?rgn=65044&ysclid=15fd708hbw964706882](https://base.spininform.ru/show_doc.fwx?rgn=65044&ysclid=15fd708hbw964706882) (letzter Zugriff: 15.11.2022).
- ЗАКОНОДАТЕЛЬСТВО СТРАН СНГ, ЗАКОН РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ. Об основах культурного законодательства. Неофициальный перевод, unter: [https://base.spininform.ru/show\\_doc.fwx?rgn=10672&ysclid=15fcmofzwj676838400](https://base.spininform.ru/show_doc.fwx?rgn=10672&ysclid=15fcmofzwj676838400) (letzter Zugriff: 15.11.2022).
- ЗАКОНОДАТЕЛЬСТВО СТРАН СНГ, ЗАКОН РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ. О вывозе и ввозе культурных ценностей, unter: [https://base.spininform.ru/show\\_doc.fwx?rgn=31136&ysclid=15fd03q99w858012910](https://base.spininform.ru/show_doc.fwx?rgn=31136&ysclid=15fd03q99w858012910) (letzter Zugriff: 15.11.2022).
- ЗАКОНОДАТЕЛЬСТВО СТРАН СНГ, Правила перемещения культурных ценностей через таможенную границу Азербайджанской Республики. Неофициальный перевод, 2009, unter: [https://base.spininform.ru/show\\_doc.fwx?rgn=30332&ysclid=15feb-wki39977958787](https://base.spininform.ru/show_doc.fwx?rgn=30332&ysclid=15feb-wki39977958787) (letzter Zugriff: 15.11.2022).
- Иззет, Илькин, В Азербайджане утверждены правила вывоза культурных ценностей из страны, 2014, unter: <https://www.trend.az/Aserbajdschan/society/2309475.html> (letzter Zugriff: 15.11.2022).
- Саркисян, Арам / Амбарцумян, Анжела, »Историко-культурное наследие не должно становиться политическим инструментом«: ЮНЕСКО об отправке миссии в Арцах, 2022, unter: <https://www.ra.am/archives/56567/?ysclid=15ed913j76234175611> (letzter Zugriff: 15.11.2022).
- ЮРИСТ, Закон Азербайджанской Республики от 21 декабря 2012 года № 506-IVQ О культуре, unter: [https://online.zakon.kz/Document/?doc\\_id=31498071](https://online.zakon.kz/Document/?doc_id=31498071) (letzter Zugriff: 15.11.2022).

---

## Autor

**Prof. Prof. h.c. Dr. Dr. h.c. Alexander Trunk**

Seit 1998 Direktor des Instituts für Osteuropäisches Recht der Christian-Albrechts-Universität zu Kiel, Deutschland, Ehrendoktor der Ivane Javakhishvili Tbilisi State University. Leiter der Kieler Sektion der Deutschen Gesellschaft für Osteuropakunde, [atrunk@law.uni-kiel.de](mailto:atrunk@law.uni-kiel.de)

Ալեքսանդր Թրունկ

# Լեռնային Ղարաբաղի (Արցախի) մշակութային ժառանգության պաշտպանությունը իրավական տեսանկյունից

## 1. Ներածություն

Մշակութային ժառանգության պաշտպանության կարևորությունը մարդկային հասարակությունների համար, հատկապես այն ազգերի, որոնց համախմբվածության զգացումը և հետագա գոյությունը ընդհանուր մշակութային ժառանգության միջոցով է ձևավորվում, հայտնի է մեզ բոլորիս:<sup>1</sup> Այս հոդվածի նպատակն է ներկայացնել տվյալ թեմայի իրավական ասպեկտները՝ հատուկ անդրադարձ կատարելով Արցախի (Լեռնային Ղարաբաղ):

### 1.1 Մշակութային ժառանգության իրավական պաշտպանությունը որպես մարդկային հասարակությունների պաշտպանության բաղկացուցիչ մաս

Առաջին հերթին, իհարկե, հասկանալի է, որ մշակութային ժառանգության պաշտպանությունը իրավական գործիքակազմի օգնությամբ, այսինքն՝ օրենսդրական դրույթների և դրանց կիրառման միջոցով, ընդամենը մի նմուշն է ներկայացնում այն բազմաթիվ տարբեր միջոցառումների, որոնք ծառայում են մշակութային ժառանգության պաշտպանությանը:<sup>2</sup> Վերջին հաշվով, սա վերաբերում է մշակութային ժառանգության հետ առնչվող մարդկանց վարքագծին, իսկ այդ վարքագիծը ուղղորդվում է բազմաթիվ հանգամանքներով: Իրավական կանոնակարգերը կարող են նպաստել վարքագծի վերահսկմանը մի փոքր մասով միայն, և բոլորին է հայտնի, որ օրենսդրական դրույթները կարող են հեշտությամբ անտեսվել: Խոսքը վերաբերում է ինչպես ներպետականին, այնպես էլ միջպետական խնդիրներին: Այնուամենայնիվ, օրենսդրական կարգավորումներն էական նշանակություն ունեն. նրանք չափանիշներ են սահմանում հանրային

1 Մուսքի համար տես օր.՝ Wikipedia, Cultural heritage (2022) և Bierwerth (2014):

2 Մշակութային ժառանգության պաշտպանության տարբեր ասպեկտների մասին կարելի է ներածական ակնարկ գտնել, օր. այստեղ՝ Wikipedia (2022); տես նաև՝ European Commission (2022):

գիտակցության համար և կարող են, համենայնդեպս, իդեալական դեպքում, կիրառության մեջ մտնել: Իսկ եթե դրանք բացակայում են, ապա անշուշտ ոչ թե աստվածաբանական կամ փիլիսոփայական, այլ իրավական տեսանկյունից այնպես է դառնում, որ «ամեն ինչ թուլլատրելի է»:<sup>3</sup>

## 1.2 Հիմնական հասկացություններ

Հոդվածի վերնագրում օգտագործվում է «մշակութային ժառանգության» (պաշտպանությունը) հասկացությունը: Իրավական նկատառումների համար կարևոր է նախ հնարավորինս ճշգրիտ սահմանել, թե ինչ է նշանակում մշակութային ժառանգություն, քանի որ դրանից է կախված, թե որ իրավական կանոնակարգերը կիրառություն կգտնեն որոշակի մշակութային օբյեկտների կամ, միգուցե, նույնիսկ մարդկային մշակույթի ոչ նյութական բաղադրիչների նկատմամբ:

«Մշակութային ժառանգություն» (cultural heritage, patrimoine culturel) հասկացությունը կիրառվում է բազմաթիվ իրավական փաստաթղթերում, բայց երբևէ հստակ սահմանված չէ:<sup>4</sup> Մշակութային ժառանգության առանցքը այսպես կոչված մշակութային արժեքներն են, այսինքն՝ շարժական առարկաները կամ անշարժ գույքը, որոնք յուրահատուկ ու երբեմն ոչ միայն նյութական արժեք ունեն մի ազգի կամ նույնիսկ ողջ մարդության համար: Դրանց մեջ են մտնում օրինակ արվեստի գործեր, գրքեր, պատմական կամ գեղարվեստական հուշարձաններ, թանգարաններ, մեծ գրադարաններ և նույնիսկ հնագիտական վայրեր:<sup>5</sup> Համաձայն մշակութային պայմանագրերի՝ առանձնակի կարևոր մշակութային արժեքները կարող են ներառվել որոշակի ցուցակներում:<sup>6</sup> Մշակութային ժառանգության հայեցակարգը տարածվում է մշակութային արժեք հասկացությունից անդին և ներառում է, նաև, օրինակ, ոչ նյութական դիտարկման օբյեկտներ, ինչպիսիք են բանավոր ավանդույթները, պարը, թատրոնը, երաժշտությունը, ժառանգված սոցիալական ավանդույթները, ավանդական արհեստագործությունը կամ գիտելիքը:<sup>7</sup> Թե որքանով են պաշտպանված մշակութային ժառանգության նման բաղադրիչները, և ինչպես է այդ պաշտպանությունը կառուցված, կախված է տարբեր իրավական ակտերից, օրինակ՝ Միավորված ազգերի (ՅՈՒՆԵՍԿՕ) շրջանակներում կնքված կոնվենցիաներից: Համաձայն ՅՈՒՆԵՍԿՕ-ի 1972 թ. համաշխարհային ժառանգության կոնվենցիայի՝ կարող են նույնիսկ ամբողջ անսամբլներ,

3 Հմմտ. Wikipedia, Recht (2022):

4 Հմմտ. Heritage for Peace (2022), ապա՝ Cultural Heritage Studies (2022): ՅՈՒՆԵՍԿՕ-ի 1972 թ. Համաշխարհային ժառանգության կոնվենցիայի 2-րդ հոդվածը փորձում է սահմանել տերմինը, սակայն սահմանափակվում է որոշակի ֆիզիկական օբյեկտների ցանկով, որոնք ընդգրկված են կոնվենցիայի շրջանակում, տես՝ Unesco (1972):

5 Տես՝ Wikipedia, Kulturgut (2022):

6 Օր. Քերմանիայի համա տնս Datenbank geschützter Kulturgüter (2022); ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային ժառանգության կոնվենցիայի համար՝ ICOM RedLists (2022); ընդհանուր՝ Wikipedia, Kulturgutschutz (2022):

7 Տես՝ Wikipedia, Intangible cultural heritage (2022):

ինչպիսին, օրինակ, միջնադարյան խորվաթական հնաքաղաք Դուբրովնիկն է,<sup>8</sup> կամ հնագիտական վայրեր որպես համաշխարհային ժառանգություն դասակարգվելի:<sup>9</sup> Մշակութային ժառանգության պաշտպանությունը տարածվում է նույնիսկ առանձնակի կարևորություն ունեցող բնական երևույթների կամ տարածքների վրա (այսպես կոչված՝ բնական ժառանգություն):<sup>10</sup>

### 1.3 Մշակութային ժառանգության, մասնավորապես մշակութային արժեքների պաշտպանության կառույցները

Մշակութային ժառանգության պաշտպանության կանոնակարգերը կարող են համակարգվել տարբեր եղանակներով: Որոշ կանոնակարգեր հատուկ վերաբերում են մշակութային արժեքների պաշտպանությանը զինված հակամարտությունների ընթացքում, մյուսները՝ մշակութային արժեքների պաշտպանությանն ընդհանրապես, այսինքն՝ նաև և հատկապես խաղաղ ժամանակներում:<sup>11</sup> Մշակութային արժեքների պաշտպանությունը (ինչպես նաև մշակութային ժառանգության պաշտպանությունն ընդհանրապես) ներառում է տարբեր գործիքներ՝ փաստաթղթերից սկսյալ (օրինակ՝ ցուցակագրման միջոցով) մինչև որոշակի հրամաններ կամ արգելքներ: Որոշ առանձին կանոնակարգեր վերաբերում են մշակութային արժեքների ապօրինի արտահանմանը այլ երկրներ և նախատեսում են, օրինակ՝ դրանց հետվերադարձը ծագման երկիր: Որոշ դեպքերում նաև նախատեսված է քրեական պատասխանատվություն:<sup>12</sup> Այս կանոնակարգերից շատերը կարող են կիրառություն գտնել Արցախի մշակութային ժառանգության պահպանության համար:

Ներքևում նախնառաջ ներկայացվելու է ակնարկ որոշ կանոնակարգերի վերաբերյալ, որոնք պետք է որ հատկապես կարևոր լինեն Արցախի պարագայում: Այնուհետև ես ստուգելու եմ այդ կանոնակարգերի կիրառելիությունը ներկայիս յուրահատուկ իրավիճակի համար: Կարևոր է նշել, որ կանոնակարգերն ինքնին, այդ թվում նաև իրավական տեսանկյունից, մշակութային ժառանգության պաշտպանության ամբողջական պատկերը մեզ չեն տալիս, այլ, առաջին հերթին ամեն բան կախված է նրանից, թե ինչպես են դրանք կիրառվում գործնականում: Այս կիրառությունը կարող է սկսվել անշուշտ դատարաններից կամ միջնորդ դատարաններից, բայց նաև պետական մարմիններից, հասարակական կազմակերպություններից, մասնավոր ընկերություններից և նույնիսկ անհատներից, որոնք հետամուտ են մշակութային արժեքների պաշտպանությանը: Այս առումով օրենքը միայն լրացուցիչ գործառնություն է:

8 Տե՛ս UNESCO, World Heritage Convention. Old City of Dubrovnik (2022):  
 9 Հմմտ. UNESCO, World Heritage Convention. Lists (2022):  
 10 Համաշխարհային ժառանգության կոնվենցիայի հոդված 2, տե՛ս UNESCO, World Heritage Convention. Natural Properties (2022):  
 11 Տե՛ս ավելին Odendahl, Kulturgüterschutz (2005), ամբողջական:  
 12 Համապարփակ ակնարկ է տալիս Anton-ն իր «Kulturgüterschutz und Kunststittutionsrecht» ձեռնարկի մի քանի հատորներում (2010-ից սկսյալ):

## 2. Ակնարկ մշակութային արժեքների պաշտպանության իրավական հիմքերի վերաբերյալ

Մշակութային ժառանգության պաշտպանության ֆորմալ իրավական կարգավորումները կարելի է գտնել մի կողմից միջազգային իրավունքում, հատկապես միջազգային պայմանագրերում,<sup>13</sup> մյուս կողմից՝ առանձին պետությունների օրենսդրության մեջ, օրինակ՝ Հայաստանի օրենսդրության մեջ, և, ինչը կարևոր է նաև Արցախի համար, Ադրբեջանի:<sup>14</sup>

### 2.1 Միջազգային իրավունք

#### ա) 1954 թ. Հասագայի՝ զինված ընդհարումների դեպքում մշակութային արժեքների պաշտպանության մասին կոնվենցիան

Հաշվի առնելով 2020 թ. պատերազմը՝ Արցախի համար մշակութային արժեքների պաշտպանության կարևորագույն պայմանագիրը 1954 թ. մայիսի 14-ի «Զինված ընդհարումների դեպքում մշակութային արժեքների պաշտպանության մասին» Հասագայի կոնվենցիան է:<sup>15</sup> Այն պաշտպանում է շարժական և անշարժ մշակութային արժեքները, հետևապես՝ նաև օրինակ արվեստի գործերը, զրբերը կամ եկեղեցիները պատերազմական գործողությունների ընթացքում վնասումից կամ ոչնչացումից: Տվյալ համաձայնագիրը մշակութային ժառանգության պաշտպանական գործողությունների համար նախատեսում է համապատասխան արգելքներ և պահանջներ: Այնուամենայնիվ, այս համաձայնագիրը առհասարակ միայն միջազգային հակամարտություններում է կիրառվում:<sup>16</sup> Սակայն, ըստ 1999 թ. (2-րդ) արձանագրության, դրա կիրառումը տարածվեց նաև ներպետական զինված հակամարտությունների վրա:<sup>17</sup> Ինչպես Հայաստանը, այնպես էլ Ադրբեջանը վավերացրել են 1954 թ. հիմնական համաձայնագիրը, ինչպես նաև 1999 թ. հավելյալ արձանագրությունը:<sup>18</sup> Հետևաբար, պայմանագիրը կիրառելիություն է ստանում Ադրբեջանի և Արցախի միջև պատերազմի դեպքում, նույնիսկ եթե տվյալ հակամարտությունը որակվում է որպես Ադրբեջանի ներքին հակամարտություն, քանի որ Արցախը միջազգային հանրության կողմից չի ճանաչվել որպես

13 Այն հարցին, թե որքանով է միջազգային սովորութային իրավունքը ներառում նաև մշակութային արժեքների պաշտպանության կանոններ, տես Odendahl, Kulturgüterschutz (2005), 169-171:

14 Եվրամիության օրենքը միայն անուղղակի նշանակություն ունի Արցախի համար, օրինակ՝ այնքանով, որքանով ԵՄ օրենսդրությունը պետք է կիրառվի ԵՄ երկրների (կամ այլ պետությունների) դատարաններում: Սա չի բացառվում, քանի որ ԵՄ կանոնակարգը կարող է ներառել նաև Արցախին վերաբերող հարցեր: Իհարկե, ինչպես Հայաստանը, այնպես էլ Արցախը պարտավորված չեն ԵՄ օրենսդրությամբ:

15 UNESCO (1954): Ընդհանուր այս համաձայնագրի մասին տես Wikipedia, Haager Konvention (2022):

16 Կոնվենցիայի 18-րդ հոդված: Կոնվենցիայի 19-րդ հոդվածը նախատեսում է կիրառումը ոչ միջազգային հակամարտությունների դեպքում (միայն, բայց այնուամենայնիվ) պայմանագրի սահմանափակ:

17 Fedlex, Zweites Protokoll zum Haager Abkommen (2022):

18 Հմնմ. UNESCO, The Hague Convention. States Parties (2022):



անկախ պետություն (ոչ էլ նույնիսկ Հայաստանի կողմից):<sup>19</sup> 1954 թ. Հաագայի կոնվենցիայի թույլ կողմն այն է, որ չունի իր սեփական կիրարկման մեխանիզմը: Թեև այն կառավարվում է Միավորված ազգերի կազմակերպության, ավելի ճիշտ՝ Միավորված ազգերի կրթության, գիտության, մշակույթի և հաղորդակցության կազմակերպության (ՅՈՒՆԵՍԿՕ-ի) կողմից, սակայն սկզբունքորեն դա կախված է պետությունների կամավոր համագործակցությունից: Որոշ ժամանակ առաջ ՁԼՄ-ներում հաղորդվել էր, որ ՅՈՒՆԵՍԿՕ-ն Հայաստանի առաջարկով փաստահավաք առաքելություն է պլանավորում դեպի Արցախ՝ հետաքննելու 2020 թ. Ադրբեյջանի վերագրավյալ տարածքներում ադրբեյջանական մարմինների կողմից հայկական հուշարձանների պղծման մասին հաղորդումները. այդ առաքելությունը, սակայն, կարծես թե մինչ այժմ ձախողվել է Ադրբեյջանի դիմադրության պատճառով:<sup>20</sup> Այդպիսի առաքելությունն ու դրանից բխող բացահայտումներն, անշուշտ, զգալի քաղաքական ազդեցություն կունենային, սակայն Ադրբեյջանին հնարավոր չէ ստիպել անհասպող համաձայնվել դրանց իրականացմանը:

Հաագայի մշակութային արժեքների պաշտպանության կոնվենցիայի դեմ արված խախտումները կարող են քննադատվել ՄԱԿ-ին պատկանող տարբեր կառույցների կողմից, օրինակ՝ ՄԱԿ-ի մշակութային հարցերով հատուկ զեկուցողի<sup>21</sup> կամ «Զինված ընդհարման դեպքում մշակութային արժեքների պաշտպանության միջկառավարական կոմիտե»-ի կողմից:<sup>22</sup> Հայցը հնարավոր է նաև վիճարկել Միավորված ազգերի կազմակերպության Արդարադատության միջազգային դատարանում (ԱՄԴ)՝ սկզբունքորեն միայն շահագրգիռ պետությունների համաձայնությամբ, սակայն որոշ դեպքերում նաև առանց որևէ կոնկրետ համաձայնության, եթե, օրինակ, որոշակի կոնվենցիաների խախտում է նկատվում: Այսպես օրինակ 2021 թ. դեկտեմբերի 7-ին ԱՄԴ-ը միջանկյալ հրաման է արձակել՝ որպես Հայաստանի կողմից Ադրբեյջանի դեմ վարույթի մաս՝ հիմնված ռասսայական խտրականության դեմ կոնվենցիայի<sup>23</sup> վրա, որը վերաբերում է մշակութային արժեքների պաշտպանությանը:<sup>24</sup> Սկզբունքորեն, Միջազգային քրեական դատարանի<sup>25</sup> իրավասությունը կամ ներպետական քրեական հետապնդումը<sup>26</sup> նույնպես կարող են նկատի առնվել, թեև վերջինս հազվադեպ է իրագործվում:

19 Տե՛ս Wikipedia, Bergkarabachkonflikt (2022): Իհարկե, դա չի բացառում Արցախին մասնակի միջազգային իրավունակության շնորհումը, տե՛ս Luchterhandt (2021): Սակայն այս հարցը, հավանաբար, չի վերաբերում Հաագայի կոնվենցիայի կիրառմանը:

20 Հմմտ. Саркисян / Амбарцумян (2022) և HETQ (2022), տե՛ս նաև՝ Clare O'Hagan (2020):

21 Տե՛ս OHCHR (2022):

22 Տե՛ս UNESCO, 1954 Convention Second Protocol (2022); Արցախի վերաբերյալ այս հանձնաժողովի հայտարարությունը տե՛ս՝ UNESCO (2020):

23 Տե՛ս Wikipedia, Internationales Übereinkommen (2022):

24 Տե՛ս International Court of Justice (2021):

25 Տե՛ս Wikipedia, Internationaler Strafgerichtshof (2022):

26 Միրիացի ապաստան հայցողի Գերմանիայում քրեական հետապնդման ենթարկվելու նոր դեպքի համար՝ Միրիայում նրա կողմից կիրառած խոչտանգումների պատճառով, տե՛ս Haufe Online Redaktion (2022):

### բ) 1954 թ. Եվրոպական մշակութային համաձայնագիր (Եվրոպական խորհուրդ)

Մշակութային արժեքների պաշտպանության ևս մեկ հիմնարար համաձայնագիր, որն այս անգամ չի սահմանափակվում զինված հակամարտություններով, նույնպես 1954 թ. Եվրոպական խորհրդի կողմից ընդունված «Եվրոպական մշակութային համաձայնագիրն» է:<sup>27</sup> Ի թիվս այլ դրույթների, այս համաձայնագիրը մասնակից պետությունների համար նախատեսում է ընդհանուր պարտավորություն՝ «իրենց վերահսկողության տակ» պաշտպանելու Եվրոպական մշակութային արժեքները (հոդված 5): Եվրոպական մշակութային կոնվենցիայի կիրառումը վերահսկվում է Եվրոպական խորհրդի մարմինների կողմից, մասնավորապես՝ մշակութային խնդիրների համար հատուկ ստեղծված «մշակույթի, ժառանգության և լանդշաֆտի հարցերով ղեկավար կոմիտեի» (CDCPP)<sup>28</sup> կողմից: Հետևաբար, վերահսկման մեխանիզմներն այստեղ մի փոքր ավելի ընդգծված են, քան Հաագայի մշակույթի պաշտպանության կոնվենցիայում, բայց չնայած դրան դեռևս շատ մեղմ են: Մշակութային համաձայնագրի խախտման պատճառով հնարավոր չէ անմիջապես դիմել Մարդու իրավունքների եվրոպական դատարան,<sup>29</sup> բացառությամբ, եթե միաժամանակ առկա է նաև Մարդու իրավունքների կոնվենցիայի խախտում: Այնուամենայնիվ, պետք չէ թերազնահատել Եվրոպական խորհրդի, ինչպես նաև ՅՈՒՆԵՍԿՕ-ի Հաագայի կոնվենցիայի ոչ պաշտոնական ազդեցությունը: Մշակութային արժեքների պաշտպանության արդյունավետությունը բարձրացնելու նպատակով Եվրոպայի խորհուրդը 2017 թ. «մշակութային արժեքների հետ կապված քրեական հանցագործությունների մասին»<sup>30</sup> կոնվենցիա է մշակել, որն, ի թիվս այլ միջոցների, քրեական հետապնդում է նախատեսում մշակութային արժեքներին վնաս հասցնելու, ոչնչացման կամ գողության համար, սակայն այն դեռ ուժի մեջ չի մտել:

### գ) Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիա

1950 թ. Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան (ՄԻԵԿ),<sup>31</sup> որի մասին արդեն հակիրճ խոսվել է,<sup>32</sup> պաշտպանում է նաև այն հիմնարար իրավունքները, որոնք կարող են վերագրվել մշակութային ոլորտին («հիմնարար մշակութային իրավունքներ»), մասնավորապես՝ մտքի, խղճի և կրոնական ազատության հիմնարար իրավունքը (հոդված 9), խտրականության արգելումը (հոդված 14 և

27 Council of Europe (1954), ի հավելումն տես Wikipedia, Europäisches Kulturabkommen (2022): Հայաստանն ու Ադրբեյջանը այս համաձայնագրի մասնակից պետություններ են: Կան նաև Եվրոպայի խորհրդի այլ կոնվենցիաներ մշակութային խնդիրների վերաբերյալ, տես Council of Europe, Cultural and Cultural Heritage Standards (2022):

28 Հմմտ. Council of Europe, CDCPP (2022):

29 Council of Europe, Der Europäische Gerichtshof für Menschenrechte (2022):

30 Council of Europe (1985):

31 European Court of Human Rights / Council of Europe (2021):

32 Տես Wikipedia, Internationaler Strafgerichtshof (2022):

հողված 1-ի 12-րդ լրացուցիչ արձանագրություն), կրթության իրավունքը (հողված 2-ի 1-ին լրացուցիչ արձանագրություն): Մշակութային արժեքները կարող է պաշտպանել նաև սեփականության հիմնարար իրավունքը (հողված 1, 1-ին լրացուցիչ արձանագրություն): Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան 1954 թ. մշակութային համաձայնագրի համեմատ ունի այն առավելությունը, որ օժտված է Ստրասբուրգի Մարդու իրավունքների դատարան հայց ներկայացնելու հնարավորության հատուկ կիրարկման մեխանիզմով: Այնուամենայնիվ, հայցի հնարավորություն կա միայն անհատական հիմնարար իրավունքների խախտման դեպքում: Իրավաբանական անձինք (ներառյալ եկեղեցիները և այլ կրոնական համայնքներ)<sup>33</sup> և մարդկանց խմբերը, այդուամենայնիվ, լիազորված են հայցով (ՄԻԵԿ-ի հողված 34): Եթե, օրինակ, Հայ առաքելական եկեղեցուն պատկանող մի եկեղեցի պղծվի կամ վնասվի աղբբեջանական կողմից, ապա հայցը քննարկվում է Մարդու իրավունքների եվրոպական դատարանում: Այս դեպքում նույնպես անհապաղ կիրարկման տարբերակներ գոյություն չունեն Աղբբեջանի դեմ, բայց դատարանը կարող է դատապարտել Աղբբեջանին, օրինակ, վնասների փոխհատուցում կատարել: Բացի դրանից, դատավճռի հանրային ազդեցությունը անհետևանք չէ:

### դ) ՅՈՒՆԵՍԿՕ-ի այլ համաձայնագրեր

Արցախի համար պոտենցիալ կարևոր են նաև ՅՈՒՆԵՍԿՕ-ի 2003 թ. ոչ նյութական ժառանգության պահպանմանն ուղղված<sup>34</sup> և մշակութային արտահայտչամիջոցների պաշտպանությանն ու օժանդակմանն ուղղված 2005 թ.<sup>35</sup> համաձայնագրերը: Երկու դեպքում էլ ինչպես Հայաստանը, այնպես էլ Աղբբեջանը պայմանագրային կողմեր են, բայց երկու համաձայնագրերն էլ չեն պարունակում կիրարկման հատուկ մեխանիզմներ:

### ե) Վերականգնման կանոնակարգեր

Մշակութային արժեքների պաշտպանության հատուկ թեման են վերականգնման կանոնները, այսինքն՝ մշակութային արժեքներն իրենց ծագման երկիր վերադարձման կանոնակարգը, օրինակ, երբ մշակութային արժեքները զինված հակամարտությունների ընթացքում կամ այլ համատեքստում ապօրինի դուրս են բերվել տվյալ երկրից: ՅՈՒՆԵՍԿՕ-ն դրա համար 1970 թ. հատուկ կոնվենցիա է մշակել՝ ուժի մեջ մտած «Մշակութային արժեքների ապօրինի ներմուծման, արտահանման և սեփականության իրավունքի փոխանցման արգելման և կանխարգելման միջոցառումների մասին համաձայնագիրը»:<sup>36</sup> Հայաստանն ու Աղբբեջանը նույնպես

33 Սա ներառում է նաև կրոնական կազմակերպությունները, օր.՝ ՄԻԵԿ-ի 2020 թ. փետրվարի 20-ի վճիռը՝ CASE OF RELIGIOUS COMMUNITY OF JEHOVAH'S WITNESSES v. ASERBAIDJAN, տե՛ս European Court of Human Rights (2020):

34 UNESCO (2003):

35 UNESCO (2005):

36 UNESCO (1970):

ներգրավված են սույն համաձայնագրում որպես կապալառուներ, ինչպես նաև Գերմանիան և շատ այլ պետություններ:<sup>37</sup>

## 2.2 Ներազգային օրենք

Բացի միջազգային համաձայնագրերից, մշակութային ժառանգության պաշտպանությունն, իհարկե, կարգավորվում է նաև առանձին պետությունների օրենսդրությամբ: Ինչպես Հայաստանը, այնպես էլ Ադրբեջանը ունեն մշակույթի մասին հիմնարար օրենքներ,<sup>38</sup> որոնք նախատեսում են մշակութային ժառանգության պաշտպանությունը: Որոշ հատուկ ոլորտների, օրինակ՝ մշակութային օբյեկտների ներմուծման ու արտահանման համար մշակվել են հավելյալ կանոնակարգեր:<sup>39</sup> Դրան գումարած կիրառվում են քաղաքացիական իրավունքի, վարչական իրավունքի և քրեական իրավունքի ընդհանուր դրույթները, օրինակ, երբ մշակութային արժեքները ոչնչացվում, գողացվում, կամ ապօրինի ճանապարհով արտահանվում են:

Մշակույթի մասին հայաստանյան օրենքը նաև պաշտպանում է մասնավորապես «հայկական մշակույթը»: Այդպիսով, պետք է որ Արցախում նույնպես հայկական մշակութային արժեքները ընդգրկվեն օրենքի պաշտպանության տակ: Սակայն մշակութային արժեքների ներմուծման և արտահանման մասին հատուկ օրենքը, ըստ իր ձևակերպման, տարածվում է միայն Հայաստանի Հանրապետության տարածքի վրա, այսինքն՝ չի ընդգրկում Արցախը:

Ադրբեջանի մշակույթի մասին օրենքը հատուկ կանոնակարգեր չունի Լեռնային Ղարաբաղի վերաբերյալ: Քանի որ ադրբեջանական տեսանկյունից Արցախն Ադրբեջանի մաս է կազմում, օրենքի տրամաբանությանը համապատասխան Ադրբեջանը պարտավոր է կատարել Արցախի մշակութային արժեքների վերաբերյալ իր իսկ օրենքի դրույթները: Արդյոք դա գործնականում իրագործելի է, այլ հարց է: Եվ հակառակը, կարելի է ենթադրել, որ ադրբեջանական տեսանկյունից արգելված է նաև հայկական մշակութային արժեքների Արցախից Հայաստան արտահանումը: Սա, անկասկած, հակամարտության ներուժ է պարունակում, հատկապես, եթե

37 Ներկայումս 143 մասնակից պետություններ, տես UNESCO, About 1970 Convention (2022):

38 Հայաստան. «Մշակույթի օրենսդրության հիմունքների մասին» Հայաստանի Հանրապետության 2002 թ. դեկտեմբերի 18-ի օրենքը. ЗАКОНОДАТЕЛЬНОСТЬ СТРАН СНГ, ЗАКОН РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ. Об основах культурного законодательства (2022) և ՀՀ Մշակույթի նախարարություն (2015): Տես նաև օր.՝ Ադրբեջան. «Մշակույթի մասին» Ադրբեջանի Հանրապետության 2012 թ. դեկտեմբերի 21-ի օրենքը. ЗАКОНОДАТЕЛЬНОСТЬ СТРАН СНГ, ЗАКОН АЗЕРБАЙДЖАНСКОЙ РЕСПУБЛИКИ. О культуре (2022), ավելի՛ն՝ ЮРИСТ (2022) և КОНТИНЕНТ (2022):

39 Հայաստանի 2004 թ. դեկտեմբերի 29-ի հատուկ օրենքը «Մշակութային ավարանքների ներմուծման և արտահանման մասին». Unesco (2004), ավելի՛ն՝ ЗАКОНОДАТЕЛЬНОСТЬ СТРАН СНГ, ЗАКОН РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ. О вывозе и ввозе культурных ценностей (2022): Սույն օրենքը տարածվում է միայն Հայաստանի Հանրապետության տարածքից արտահանման վրա (հոդված 5): Արցախն այստեղ հասցեագրված չէ: Ադրբեջանը մշակութային արժեքների արտահանումը կարգավորում է «Մշակույթի մասին» օրենքի 424-րդ հոդվածով, դրույթը լրացվում է ենթաօրենսդրական դրույթներով, տես՝ ЗАКОНОДАТЕЛЬНОСТЬ СТРАН СНГ, Правила перемещения культурных ценностей через таможенную границу Азербайджанской Республики (2009) և Иззет (2014): Քանի որ, ըստ Ադրբեջանի և միջազգային հանրության, Արցախը պատկանում է Ադրբեջանի տարածքին, ապա սկզբունքորեն արգելված է նաև մշակութային արժեքների արտահանումը, օրինակ, Հայաստան: Ըստ մամուլի հրապարակումների Ադրբեջանը խստորեն պնդում է այս դիրքորոշումը:

հայկական դիտանկյունից վտանգ է տեսնվում, որ Ադրբեջանն Արցախում հայկական մշակութային արժեքներին պատշաճ կերպով չի վերաբերվում:

Համացանցում առկա Արցախի օրենքների ցանկում ես չկարողացա մշակութային արժեքների պաշտպանության վերաբերյալ որևէ կարգավորում գտնել:<sup>40</sup> Քանի որ Արցախը միջազգային հանրության կողմից ճանաչված չէ որպես անկախ պետություն, նման կարգավորումը ամեն դեպքում սկզբունքորեն նշանակություն կունենա միայն Արցախի ներսում: Չնայած, պետք է նշել, որ այսպես կոչված չճանաչված պետությունների իրավական կարգավիճակը ինչպես միջազգային իրավունքում, այնպես նաև այլ պետությունների միջազգային մասնավոր և դատավարական իրավունքում բարձրացնում է բազմաթիվ չլուծված հարցեր:<sup>41</sup>

### 3. Նշանակությունն Արցախի համար

Ինչ նշանակություն ունի ներկայիս իրավական դիրքորոշումն Արցախի համար: Դրական ելակետն այն է, որ ինչպես միջազգային իրավունքի, այնպես էլ (սկզբունքորեն) Հայաստանի և Ադրբեջանի ներազգային օրենսդրության համաձայն, Արցախի մշակութային արժեքները իրավական առումով պաշտպանված են: Այդուամենայնիվ, այս պաշտպանությունը կիրառելու հնարավորությունը շատ թույլ է ձևավորված: Ըստ էության, ներկայումս առկա են միայն պաշտպանիչ գործիքներ՝ հենվելով Ադրբեջանի կողմից կամավոր հանձնառության վրա: Պարտադիր չէ, որ դրանք անարդյունք լինեն: Օրինակ կարող է ծառայել Արդարատության միջազգային դատարանի 2021 թ. դեկտեմբերի 7-ի վերոհիշյալ միջանկյալ որոշումը, որում Ադրբեջանին կոչ է արվում թույլ չտալ հայկական մշակութային արժեքների վնասում կամ ոչնչացում Ադրբեջանի կողմից վերագրավյալ արցախյան տարածքներում:<sup>42</sup> Ադրբեջանը հերքում է, որ նմանատիպ վնասներ կամ ոչնչացումներ են եղել, այլ պարզապես վերացվել են «հայկական կեղծիքները»: Քանի որ Արդարադատության միջազգային դատարանը չունի կատարողական լիազորություններ, արդյունքում միակ բանը, որ մնում է, նորից ընդունելի լուծում գտնելու ջանքերն են:

Ուստի Հայաստանի դիրքերն ավելի ուժեղ են դառնում, երբ Արցախում առանձնակի պաշտպանվող արժեքները թիրախավորվում են Ադրբեջանի քաղաքականության կողմից: Ի վերջո, այս դեպքում առկա է Մարդու իրավունքների եվրոպական դատարան տանող ուղին:

Բարդ հարցեր կարող են առաջանալ երբ մշակութային արժեքները Արցախից

40 Այս մասին մանրամասն կարելի տեղեկանալ սույն ժողովածուի Լեռնիկ Հովհաննիսյանի և Արմեն Սարգսյանի հոդվածից:

41 Steu ավելին Trunk/Trunk-Fedorova/Rogozina (Eds.), Non-Recognized States in the Post-Soviet Region (հրատարակվելու է 2024-ին):

42 Steu International Court of Justice (2021):

ներկայումս արտահանվում են կամ ապագայում կարտահանվեն Հայաստան կամ Ադրբեջան, կամ էլ այլ երրորդ երկրներ: Կարելի է վստահաբար ենթադրել, որ նման դեպքում Հայաստանն ու Ադրբեջանը մրցակցային հավակնություններ կունենան մշակութային նման օբյեկտների նկատմամբ: Եթե ապացուցվեն այն հայտարարությունները, որ Ադրբեջանն Արցախում գտնվող հայկական մշակութային արժեքներին կամ միտումնավոր վնաս է հասցնում, կամ հանդուրժում է նման վնասները, դա, անշուշտ, կուժեղացնի Հայաստանի դիրքերն արտերկրի դատարաններում՝ նման մշակութային արժեքները Հայաստան (Արցախի փոխարեն) տեղափոխելու համար: Սակայն սա համեմատաբար փոքր թեմա է՝ Արցախում օբյեկտների վնասման հետ:

Քաղաքական մակարդակում, թեև էապես հիմնված իրավական տարրերի վրա, պետք է ընդգծել Եվրախորհրդարանի 2022 թ. մարտի 10-ի բանաձևը, որում հստակ բառերով դատապարտվել է Ադրբեջանի կողմից Արցախում մշակութային արժեքների ոչնչացումը և երկու կողմերին էլ կոչ է արվել պահպանել Արցախում մշակութային ժառանգությունը:<sup>43</sup> Սակայն մինչ այժմ Եվրահանձնաժողովը տեսանելի հետևություններ չի արել այս բանաձևից:<sup>44</sup> Այդուամենայնիվ, ԵՄ խորհուրդը փորձում է Հայաստանի և Ադրբեջանի միջև որպես խաղաղ բանակցությունների հարթակ հաստատվել:<sup>45</sup> Հենց այս համատեքստում պետք է քննարկման դրվի նաև Արցախում մշակութային արժեքների պաշտպանությունը:

Այսպիսով, իմ ամփոփումը հետևյալն է. մշակութային օբյեկտների պաշտպանության իրավական կարգավիճակն իրականում նպաստավոր է Հայաստանի ու համապատասխանաբար Արցախի համար: Սա պետք է աջակցի այս թեմայի շուրջ Ադրբեջանի հետ խաղաղության պայմանագրի բանակցությունների ընթացքում Հայաստանի դիրքին, որի մասին անցողակի կարդում ենք այսօր լրատվամիջոցներում:<sup>46</sup> Ինչպես ԵՄ-ն, այնպես էլ Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպությունը (ԵԱՀԿ),<sup>47</sup> անշուշտ, այս հարցում կաջակցեն Հայաստանի դիրքորոշմանը: Իմ կարծիքով, փոխզիջումային լուծումը

43 Տե՛ս European Parliament (2022):

44 Պատճառների մասին կարելի է ենթադրություններ անել. ՁԼՄ-ներում հաճախ է ենթադրվում, որ ԵՄ-ն շահագրգռվածություն ունի Ադրբեջանի նավթի և գազի մատակարարումների նկատմամբ՝ հաշվի առնելով Ուկրաինայի ներկայիս պատերազմը և ԵՄ-ի ենթարգոները Ռուսաստանի դեմ, ինչն այստեղ մեծ դեր է խաղում: Տե՛ս Sukiasyan (2022):

45 Տե՛ս Turan (2022):

46 Այս մասին տե՛ս, բավականին նոր նյութ՝ Lewis / Whitcomb (2022): Հայտնի չէ, թե որքան լուրջ են նման բանակցությունները, երբ միաժամանակ հաղորդվում է Ադրբեջանի և Հայաստանի միջև ուսումնական բախումների վերականգնման մասին, և Ադրբեջանի նախագահը հավակնում է ավելի շատ հայկական տարածքների:

47 ԵԱՀԿ-ի (ցավոք, մինչ այժմ անհաջող) դերի մասին ԼՂ հիմնախնդրի կարգավորման գործում այսպես կոչված Մինսկի խմբի շրջանակներում, տե՛ս OSCE, OSCE Minsk Group (2022): Մինսկի խմբի համանախագահների 2021 թ. դեկտեմբերի 7-ի համատեղ հայտարարության մեջ անդրադարձ է եղել Արցախում մշակութային վայրերի պաշտպանությանը, OSCE Minsk Group (2021), բայց ամենաուշը սկսած ուկրաինական պատերազմի մեկնարկից (2022թ. փետրվարի 24), Մինսկի խմբի աշխատանքը, կարծես թե, մինչ այժմ կաթվածահար է եղել:

Կրխի նաև Ադրբեջանի շահերից, քանի որ, ի վերջո, մշակութային արժեքների պահպանումն ու դրա հետ մեկտեղ նաև Արցախի մշակութային ժառանգության պաշտպանությունը գտնվում են Կովկասի բոլոր ազգերի հետաքրքրության կենտրոնում: Եթե հաջողվի հասնել հաշտության, ապա մշակութային ժառանգության հարցը նույնպես պետք է լուծվի բոլորի համար ընդունելի եղանակով: Եվ հետո, սա ոչ միայն մշակութային, այլ նաև քաղաքական հարց է:

---

## Գրականություն

Anton, Michael, Handbuch Kulturgüterschutz und Kunstrestitutionsrecht. 3 Bände, Berlin/New York 2010:

Luchterhandt, Otto, Meinung: Das Völkerrecht und der Berg-Karabach-Konflikt, 2021, տես՝ <https://www.bpb.de/themen/kriege-konflikte/dossier-kriege-konflikte/344244/meinung-das-voelkerrecht-und-der-berg-karabach-konflikt/> (հարցվել է 15.11.2022):

Odendahl, Kerstin, Kulturgüterschutz, Tübingen 2005:

Trunk, Alexander, Marina Trunk-Fedorova, Anastasiia Rogozina (eds.), Non-Recognized States in the Post-Soviet Region under International Trade Law, Private International Law and International Civil Procedure (տպագրման ընթացքում, 2024):

----

Բոլոր համացանցային հղումները տե՛ս վերը բնագրի վերջում:

---

## Հեղինակ

### Ալեքսանդր Թրունկ, իրավ. գիտ. դոկտ., պրոֆ., պատվո պրոֆ.

1998-ից Քիլի համալսարանի Արևելյան եվրոպայի իրավագիտության ինստիտուտի տնօրեն, Արևելյան Եվրոպայի ուսումնասիրության գերմանական ասոցիացիայի Քիլի մասնաճյուղի տնօրեն, Իվանե Ջավախիշվիլիի անվան Թբիլիսիի պետական համալսարանի պատվո դոկտ., [atrunk@law.uni-kiel.de](mailto:atrunk@law.uni-kiel.de)

**Թարգմանությունը՝** Անահիտ Հ. Սարգսյանի

---

## Open Access

This paper is published under the Creative Commons Attribution-ShareAlike 4.0 International license (CC BY-SA 4.0). Please note that individual, appropriately marked parts of the paper may be excluded from the license mentioned or may be subject to other copyright conditions. If such third party material is not under the Creative Commons license, any copying, editing or public reproduction is only permitted with the prior consent of the respective copyright owner or on the basis of relevant legal authorization regulations.